

File

Alex and Marie Mancoogian  
Foundation  
21001 VAN BORN ROAD  
Taylor, Michigan 48180

IS RECEIVED SEP 12 1989

ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ 100,000 ՏՈԼԱՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՄԸ ԿԸ ՀԱՍՏԱ-  
ՏԷ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՄԱՅԵԱԿ ՍԵՄԵՐՃԵԱՆԻ

Հմայեակ յեմերձեան, որ յարգուած ազգային մըն էր Տիթրոյթի հայ  
գաղութին մէջ, վերջերս մահացաւ յառաջացեալ տարիքի մէջ: Ան բազմաթիւ  
ազգօգուտ ծրագիրներու իրականացման մէջ եղած էր մօտիկ գործակիցը ազ-  
գային բարերար Տիար Ալեք Մանուկեանին, որուն նոյնպէս եղած է անձնական  
եւ ընտանեկան մտերիմ բարեկամը:

Հանգուցեալ Պր. յեմերձեան անսակարկ կերպով ծառայած է Տիթրոյթի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ, Հայ Առաքելական Միութեան, Հ.Բ.Ը. Մի-  
ութեան, վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան եւ Հայ Տարեցներու Տան:

Պր. յեմերձեան, որ միշտ գեղահիւս հայերէնով կ'արտայայտուէր, նա-  
խանձախնդիր ազգային մըն էր հայ լեզուն եւ հայ մշակոյթը պահպանելու:

Իր հանգուցեալ բարեկամին եւ երկարամեայ գործակիցին յիշատակը յա-  
ւերձացնելու նախանձախնդրութեամբ Տիար Ալեք Մանուկեան անոր յիշատակին  
հաստատեց հիմնադրամ մը՝ 100,000 տոլար նուիրելով Բարեգործականին:  
Սոյն հիմնադրամին եկամուտներէն տարեկան երեք կրթաթոշակներ պիտի յատ-  
կացուին հայկական երկրորդական վարժարանի մը աշակերտներուն՝ նախընտրու-  
թիւնը վերապահելով Տիթրոյթի Ալեք Մանուկեան վարժարանին, ուր դասասե-  
նակ մը ձօնուած է հանգուցեալի յիշատակին: